Գլխավոր տեղեկություն

Համար	թիվ 23
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Ինկորպորացիա (25.12.2022-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2023.05.15-2023.05.28 Պաշտոնական հրապարակման օրը 04.05.2023
Ընդունող մարմին	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդ
Ընդունման ամսաթիվ	18.02.2022
Ստորագրող մարմին	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ
Ստորագրման ամսաթիվ	18.02.2022
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	24.03.2022

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2022 թվականի **թիվ 23** քաղ. Բիշքեկ

ՊԵՏԱԿԱՆ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԹԻՎ 1[1] ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը ***որոշեց.***

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 105 որոշմամբ հաստատված՝ Պետական (մունիցիպալ) գնումների նպատակներով ապրանքների առանձին տեսակների ծագման երկիրը որոշելու կանոնների թիվ 11 հավելվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 10-21-րդ կետերով.

«10. Բուլդոզերների հարթաշերեփներ՝ դարձկեն և ոչ դարձկեն

11. Մեքենաներ՝ գրունտի, քարի, հանքաքարի և այլ հանքային նյութերի խառնման և համանման մշակման համար

12. Երկանիվ հեծանիվներ և առանց շարժիչի այլ հեծանիվներ

13. Ավտոփայտատարներ

14. Հրշեջ տրանսպորտային միջոցներ, այդ թվում՝ հրշեջ ավտոմոբիլներ և հրշեջ ավտոցիստեռններ

15. Տրանսպորտային միջոցներ՝ վթարային-փրկարարական ծառայությունների և ոստիկանության համար

16. Տրանսպորտային միջոցներ՝ նավթահորերի և գազահորերի սպասարկման համար

17. Տրանսպորտային միջոցներ՝ կցորդ երկարասայլի օգտագործմամբ բեռներ փոխադրելու համար

18. Ընդհանուր նշանակության (ունիվերսալ) կոնտեյներներ

19. Մասնագիտացված կոնտեյներներ

20. Վերհան մեքենաներ՝ պահեստների մեքենայացման համար

21. Ռադիատորներ և դրանց մասերը (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8708 91 ծածկագրից)»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո։

(2-րդ կետը փոփ. ԵՏՀԽ 14.12.22 թիվ 165)

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի	**Բելառուսի**	**Ղազախստանի**	**Ղրղզստանի**	**Ռուսաստանի**

Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Դաշնությունից՝
Մ. Գրիգորյան	Ի. Պետրիշենկո	Բ. Սուլթանով	Ա. Կոժոշև	Ա. Օվերչուկ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 4 մայիսի 2023 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
14.12.2022, թիվ 165	25.12.2022, թիվ 23

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան